ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ

«5» սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-52/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2016թ. թիվ 1/73-3/10963-16 գրությամբ ներկայացված «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00440841) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 31.03.2016թ. թիվ 1/73-3/10963-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.03.2016թ. թիվ 01/61-4684 գրության պատճենը:

Կենտրոնը 31.05.2016թ. թիվ 01/04.1/2097-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2016թ. թիվ 1/73-3/10963-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (03.03.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.06.2016թ. թիվ 1/73-3/15706-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 15.04.2016թ. գրությամբ առարկել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության դեմ և հայտնել է, որ նշված պարտավորությունն առաջացել է ոչ թե ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանից ելնելով, այլ 15.02.2016թ. բյուջեի հետ փոխհարաբերությունների թիվ 5013294 ակտի համաձայն: Նշել են նաև, որ տվյալ ժամանակահատվածում Ընկերությունն ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ գերավճարներ, համաձայն որի Ընկերությունը դիմել է Երեբունի ՀՏ՝ գերավճարների հաշվին վերոնշյալ պարտավորությունները հաշվանցելու վերաբերյալ, որի արդյունքում Երեբունու ՀՏ-ի կողմից հաշվանցվել է 107.000 դրամ ԱԱՀ-ի պարտքը, սակայն նշված ակտի 10 տոկոսները, համապատասխանաբար շահութահարկ 161.032 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 40.249 ՀՀ դրամ իրենց անհասկանալի պատճառներով չի հաշվանցվել:

Միաժամանակ խնդրել են Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 11.07.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու (03.03.2016թ.) օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն և կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու հարկային տեսչության 11.07.2016թ. թիվ 1580 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 03.03.2016թ. դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 19.07.2016թ. ժամը 15:00-ին ՍՑ-ԳԲԽ-52/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

<u>3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 21.03.2016թ. թիվ 01/61-4684 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/44» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 10.03.2016թ. Նախարարությունը հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Նախարարությունը 15.03.2016թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (03.03.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 201,398 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ խնդրել է Ընկերության նկատմամբ նախաձեռներ համապատասխան գործընթաց՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 19.07.2016թ. ժամը 15:00-ին և 26.08.2016թ. ժամը 16:00-ին նշանակված նիստերի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-52/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2016թ. թիվ 1/73-3/10963-16 և 06.06.2016թ. թիվ 1/73-3/15706-16 գրություններով ներկայացված «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/44» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***03.03.2016թ.*** հայտ է ներկայացրել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (03.03.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 10.03.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 2016թ. մարտի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն 2016թ. մարտի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 201,398 ՀՀ դրամի չափով:

5. Կենտրոնը 31.05.2016թ. թիվ 01/04.1/2097-16 գրությամբ, արձանագրել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.06.2016թ. թիվ 1/73-3/15706-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

7. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 11.07.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու (03.03.2016թ.) օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն և կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու հարկային տեսչության 11.07.2016թ. թիվ 1580 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 03.03.2016թ. դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

8. Կենտրոնը 08.08.2016թ. թիվ 01/04.1/2993-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե Ընկերությունը 03.03.2016թ.

դրությամբ ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

9. Ի պատասխան Կենտրոնի 08.08.2016թ. թիվ 01/04.1/2993-16 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.08.2016թ. թիվ 1/6-1/24827-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 15.08.2016թ. դրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 00440841/ **03.03.2016թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:**

5. ՍՑ-ԳԲԽ-52/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 31.03.2016թ. թիվ 1/73-3/10963-16 գրությունը, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի 11.07.2016թ. Կենտրոնին ներկայացրած գրությունը, Երևանի քաղաքապետարան ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 21.03.2016թ. թիվ 01/61-4684 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.08.2016թ. թիվ 1/6-1/24827-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.08.2016թ. թիվ 1/6-1/24827-16 գրության համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 00440841) **03.03.2016թ.**

դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն 03.03.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ), ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.08.2016թ. թիվ 1/6-1/24827-16 գրության, չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2016թ. թիվ 1/73-3/10963-16 գրությամբ ներկայացված «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00440841) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2016թ. թիվ 1/73-3/10963-16 գրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00440841) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել՝ Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-52/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դավթյան